

ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ՄԱՐԱՂԱՑՈՒ «ՔԱՐՈՋԳՐՔԻ» ԱՌԵՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՌԱԿԱԳՐՔԵՐԻ ՀԵՏ

ՆՈՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Միջնադարյան առականների և առականտիպ գրույցների ինքնուրույն և թարգմանական ժառանգությունը բացառիկ տեղ է զբաղում հայ հին գրականության մեջ: Նշույնպես, Լոխման Հեքիմի, Սողոմոնի, Խիկար Իմաստունի, Բարուխոսի առականները հայ մշակույթի՝ գանձարան են մտել ավելի քան հազար հինգ հարյուր տարի առաջ՝ V դարում: Ուշագրության արժանի են առավելապես հետագա դարերի ընթացքում կազմված «Առական ժողովածուները», «Աղուեսագիրքը», հայ հեղինակներ Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու հավաքած և ստեղծած առականները, որոնց պատմական, հասարակական, սոցիալական, ճանաչողական, բարոյագիտական և գեղարվեստական արժանիքներն անուրանալի են:

Հայ առականագրության գիտական ուսումնասիրությունը սկսվել է նախորդ դարի վերջին: Պատմա-սրբանաիրական և բնագրագիտական զգալի աշխատանք են կատարել Ն. Մառը, Հ. Երբեյին, Մ. Արեղյանը, Գ. Տ-Մկրտչյանը: Այս գործում օգտակար ծառայություն ունեն նաև Հ. Անասյանը, Է. Պիվազյանը, Ա. Սրապյանը, Ա. Մարտիրոսյանը և այլն:

Միջնադարյան առականագրության վերաբերյալ ամենածավալուն և խորագնին ուսումնասիրությունը Ն. Մառի եռահատոր հայտնի աշխատությունն է: Մեծանուն հայագետը հիմնականում պարզել է «Առակը Վարդանայ Այգեկցույ» խորագրով ժողովածուների գոյացման հիմնական աղբյուրներն ու միջոցները, զատորոշել է Այգեկցու, Մխիթար Գոշի և հետագայում ներմուծված առականները, պարզել նրանց խմբագրությունները: Սակայն Վարդանի առականագրի ձեռագրերի մեջ հետագայում ընդգրկված առականների մի խմբի աղբյուրը Ն. Մառին անհայտ էր մնացել, թեև դրանց եվրոպական ծագումը նա կոհնել էր: Այս կապակցությամբ նա գրել է. «Մեր ժողովածուների հետ եվրոպական հուշարձանների կապի մասին վկայող փաստերը դեռևս պարզված չեն, ուստի և այդ ազդեցության ներթափանցման ուղու հարցը մենք վաղաժամ ենք համարում»¹: Ն. Մառի այս զգուշավորությունն, ըստ երևույթին, պայմանավորված էր հայ միաբարական մատենագրության նկատմամբ ժամանակի հայագիտության ունեցած ոչ այնքան դրական վերաբերմունքով: Ն. Մառի ժամանակ միաբարական Բարդուղիմեոս Մարաղացու «Քարոզգիրքը» անհայտ չէր, բայց հայտնի էլ չէր նրա բովանդակությունը, այլապես նա տեղյակ կլիներ աղբյուրի մեջ եղած հարյուրավոր առականների, առականտիպ գրույցների մասին, որոնցից քաղված են նաև Վարդանյան ժողովածուների ու շրջանի օրինակների մեջ ներմուծված բազմաթիվ առականներ:

Հ. Օրբելին, արժեքավորելով իր նախորդների աշխատանքները և Ն. Մառի աշխատությունը համարելով խիստ մասնագիտական ու ընթերցող լայն շրջաններին անհասանելի, հայկական առականները քննել է նոր տեսանկյունից: Նա կարծում էր, որ «միջազգային ոլորտում առականների

¹ Н. М а р р, Сборники притч Вардана, чч. 1—3, СПб., 1894, 1895, (այսուհետև՝ Н. М а р р. Сборники...); И. О р б е л и, Избранные труды, т. 1, М., 1968, с. 217—224; Ս. Արեղյան, Երկեր, հ. Դ, 2-րդ գիրք (X—XV դդ.), Երևան, 1970, էջ 404, Գ. Տ-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ (ԺԳ—ԺԹ), Երևան, 1979, էջ 148—193, Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն (Ե—ԺԸ դդ.), հ. Ա, Երևան, 1959, էջ 1060, Ա. Սրապյան, Հայ միջնադարյան գրույցներ, Երևան, 1969, Ա. Մարտիրոսյան, Պատմություն և խրատը Խիկարայ Իմաստունի, հ. 1, Երևան, 1969, հ. 2, 1972, Մխիթար Գոշ, Առականներ, ներածություն է. Պիվազյանի, Երևան, 1951:

² Н. М а р р, Сборники..., ч. 2, с. 241.

³ «Բնիկոտորական գրականությունը, հարկավ, գրական արժեք չունի», — գրել է նույնիսկ Ս. Արեղյանը (տե՛ս Ս. Արեղյան, Երկեր, հ. Դ, էջ 404): Հայ միաբարակապն շարժման, նրա հետևորդների ստեղծած հարուստ գրականության, վերջինիս սակավ ուսումնասիրության, բայց կարևոր նշանակության մասին մանրամասն տե՛ս Հովհաննես Քոնեցի, Ցաղագս քերականին, ներածություն Լ. Ս. Խաչիկյանի, Երևան, 1977, էջ 5—51:

տարբերակների հաջորդականության և հայկական միջավայրում զանազան խմբագրությունների ներթափանցման ուղիների հարցերը բոլորովին էլ առաջնակարգ կարևորություն չեն ներկայացնում⁴։ 2. Օրբելին, ես ծանոթ չլինելով Բարդուղիմեոս Մարազացու «Քարոզգրքի» բովանդակությանը և չենթադրելով հայ առակագրերի հետ սրա համարվոր կապը, Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակագրերի միջև ընդհանրությունները համարել է միայն վերջիններիս փոխադրության արդյունք⁵։

Մարազայի (1313), ապա Նախիջևանի (1330) եպիսկոպոս Բարդուղիմեոսի «Քարոզգրքը» (հայերեն է թարգմտել Հակոբ Քոնեցին, 1331 թ., հեղինակը մասնակցությունը) մինչև այժմ հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձել⁶։ Ըստ Ս. Արևշատյանի՝ միաբարակա՝ թարգմանությունները դրական հետաքրքրության արժանի չեն, սակայն «Քարոզգրքը» բացառություն է կազմում⁷։

Բարդուղիմեոսն իր աշխատությունները, նաև «Քարոզգրքը», ծառայելու են Վատիկանի հանձնարարությունների ու իր հիմնական նպատակի իրագործմանը՝ հայերի նախնական, հետևաբար նա իր քարոզները շարադրում էր ժողովրդի խոսակցական լեզվով, դրանք համեմելով առակներով, առակատիպ գրույցներով և այլ հետաքրքիր պատմությունով։ Մաշտոցի անվան Մատենադարանում⁸ պահվում են «Քարոզգրքի» 36 ընթերցանականություն, հնագույնը (№ 2184, 1331 թ.) վերաբերում է թարգմանության ժամանակին, վերջինը՝ (№ 5375, 1841 թ.) «Քարոզգրքի» բաղադրած առակների ժողովածու է։ Հնագույն ձեռագրից առանձնացրել են 340, իսկ մնացած 35-ից՝ ևս 430 առակ և առակատիպ գրույց։

Սեր հետազոտության արգելանքները պարզեցին, որ «Քարոզգրքի» առակների հետ նույնական կամ գրեթե նույնական են Վարդանյան ժողովածուների ձեռագրերի շուրջ 90 առակ։ Ուսումնասիրության համար օգտվել ենք Վարդանյան կոլեկցիայի առակագրերի ՄՄ Ն 36, 466, 2175, 2188, 2189, 3119⁹, Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 29, 31, 146, 174, Բեռլինի ազգային գրադարանի № 90, 95, Փարիզի ազգային գրադարանի № 135 ձեռագրերից¹⁰։ Սակայն վերոհիշյալ 90 թիվը լիովին չի արտացոլում «Քարոզգրքը» — Վարդանյան ժողովածուներ առերյուր։ որովհետև նախ՝ Ն. Մառի հրատարակել է վերջինիս ոչ բոլոր բնագրերը և ապա՝ նրան անծանոթ տասնչափ ձեռագրերում սխալված են մեծ քանակությամբ «Վարդանյան» կոչված առակներ։ Քննելը դրանցից մի քանիսի առնչությունները։

1. «Վարդանյան» հնագույն ժողովածուի խորագրերում չի նշված Վարդանի անունը՝ «Բանք պիտանիք և ոգեշահ, ժողովեալ ի Սուրբ գրոց, առ ի խրատ մարդկան»¹¹, սակայն Ն. Մառն այս ձեռագրի 27 առակներից 14-ը համարել է Վարդանին և տվել դրանց ցանկը¹²։ Այս առակներից շուրսի՝ 1. «Այգի և կամրակապ խանդակ», 2. «Սիրամարգ», 3. «Սաֆիրա ակն», 4. «Եղև և էջ»¹³, աղբյուրները նա չի պարզել։ Սրանց աղբյուրը «Բարուխսոսն» է¹⁴, բայց Վարդանի

4 И. Орбели, *նշվ.* աշխ., էջ 244։

5 Նույն տեղում, էջ 225։

6 Բարդուղիմեոսի «Քարոզգրքի» ուսումնասիրությունը ձեռնարկելու և հատկապես նրա առակագիտական նշանակությունը բացահայտելու և գնահատելու առաջարկի համար մենք ձրախտապարտ ենք (. Ս. Խաչիկյանին)։

7 С. С. Арешатян, К истории философских школ средневековой Армении (XIV в.), Ереван, 1980, с. 24.

8 Այսուհետև՝ ՄՄ.

9 Նախորդ գրքի վերջերին այս ձեռագրերն, ըստ մեր թվարկման, էջմիածնում ունեն հետևյալ համարները (բերում ենք Ն. Մառի հրատարակության պայմանագրերի հետ միասին)՝ № 12—D, № 453—B, № 2189—A, № 2281—F, № 2282—H, այժմյան № 3119-ի (Ն. Մառի մոտ՝ g) նախկին համարն անհայտ է։ «Ազոուսագիրք», Ամստերդամ, 1668 (հրատարակությունը Մառն օգտագործել է ag պայմանագրով)։

10 Վիեննայի Մխիթարյան մատենադարան (այսուհետև՝ Վիեննայի), Բեռլինի ազգային գրադարան (այսուհետև՝ Բեռլինի), Փարիզի ազգային գրադարան (այսուհետև՝ Փարիզի)։

11 ՄՄ № 2189, 1394 թ., էջ 193ա—201բ։

12 Н. Маар, Сборника..., ч. 2, с. 213.

13 Նույն տեղում, էջ 330, հ. 1, էջ 239, հ. 2, էջ 224, 329։

14 «Բարուխսոսից» Վարդանյան ժողովածուներ թափանցած առակներին կանգնողական վերջում։

առակազրքերը դրանք թափանցել են Բարդուղիմեոսի Քարոզգրքից: Առաջին և չորրորդ առակները հանդիպում են վերջինիս XIV դ. երկու ընդօրինակություններում¹⁵, որոնց համեմատությամբ Վարդանյան այս ժողովածուի առակներն ունեն խմբագրական պնշան տարբերություններ:

Հ. Մեկ զար հետո կազմվել է Վարդանյան այլ ժողովածու, ուր կան Քարոզգրքի հետևյալ առակներն ու առակատիպ զրույցները՝ 1. «Ուր զանձ անդ սիրտը» (256բ), 2. «Տեսիլ վասն գոխոց» (252ա), 3. «Հինգ տեսիլք» (252ա), 4. «Բարեպաշտ պատանին» (255ա), 5. «Վարդապետ և սատանայ» (257 բ), 6. «Գող հայր ի տանջանս որդւոյն» (259բ), 7. «Կապիկը և որորդը» (268ա)¹⁶: Բարդուղիմեոսի Քարոզգրքի «Ուր զանձ՝ անդ սիրտը» առակատիպ զրույցը և թվարկված առակները գտնվում են ՄՄ Ն՝ 2184 ձեռագրում: Վարդանյան ժողովածուներում դրանք հանդիպում են երեք անգամ՝ բնագրային շնչին տարբերակներով¹⁷:

3. Վիեննայի (Մ 31) «Առակաւոր բանք պիտանիք և խրատք ոգնշա՛հ յիմաստնոց» խորագրով Վարդանյան ժողովածուն (XVIII—XIX դդ.) պարունակում է առակների և առակատիպ զրույցների մի առանձին խումբ (ընդամենը 192 առակ՝ Մ 42—214-ը), որը, ըստ Ն. Մառի, ՄԱ Մ 2188 ձեռագրից է փոխանցվել: Բայց դրանց թվում կան հինգ առակ, որոնք վերջին ձեռագրում՝ չկան, չսայած առկա են Քարոզգրքի XIV դ. ընդօրինակություններում և, բացի Վիեննայի Մ 31 ձեռագրից, հանդիպում են նաև ՄՄ Մ 36, 2176, 3119 առակազրքերում: Այս հինգ առակները (1. «ՅԱՀարոնի պատմութանն», 2. «Երկու նախանձախնդիր զինուորք թագաւորի», 3. «Պտրգե Աղեքսանդրի», 4. «Ուխտաւոր և էշ», 5. «Երկու նկարիչ») չեն համընկնում են ՄՄ 2176 ձեռագրի (1617 թ.) առակների բնագրերին: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Քարոզգրքի առակների մի մասը նախապես ընդգրկվել է ՄՄ Մ 2188 ձեռագրում (XIV դ.), հետո մուտք է գործել ՄՄ Մ 2176 (XVII դ.) և, ի վերջո, որոշ փոփոխությամբ՝ Վիեննայի Մ 31 ձեռագրի մեջ:

4. ՄՄ Մ 2176 ժողովածուն (71ա—95բ) խորագրված է. «Գիրք առակաց ասացնալ Վարդապետին Վարդանայ ի պէտս հոգւոյ և մարմնոյ պիտանիք: Ժողովածուն ունի անհայտ ծագումով երեք առակ՝ 1. «Կտակ վասն զանձի» (71բ), 2. «Սեալ որդին» (89ա), 3. «Երկու նախանձախնդիր զինուորք թագաւորի» (39ա)¹⁸: Առաջին առակը «Աղուեսագրութան» (այսպես է կոչվել Վարդանյան առակազրքերի ամենահին ժողովածուն) հանդիպում է այլ խմբագրությամբ, բայց ՄՄ Մ 466 և Մ 36 ձեռագրերի բնագրերը կրկնում են Բարդուղիմեոսի Քարոզգրքի XIV դ. ձեռագրերի բնագրերը՝ երկրորդ և երրորդ առակների աղբյուրը Ն. Մառի անհայտ էր: «Սեալ որդին» առկա է Քարոզգրքի ՄՄ Մ 2260 (360ա), իսկ երրորդը՝ նույն Մ 2260 (198ա) և Մ 2184 (220 բ) ձեռագրերում, երկուսն էլ համարյա 300 տարով հին են Վարդանյան ժողովածուի: ՄՄ Մ 2176 ձեռագրի ընդօրինակությունից՝ «Սեալ որդին» առակի բնագրերի համեմատությամբ, չույց է տալիս, որ Վարդանի առակը Բարդուղիմեոսի առակի կրճատված տարբերակն է: Նշված ձեռագրում այս առակը բարոյախոսություն չունի և համապատասխանում է ՄՄ Մ 2260, 360ա ձեռագրի բնագրին: «Երկու նախանձախնդիր ծառայք թագաւորի» առակը, բացի Մ 2176 ձեռագրից, մտել է նաև Վարդանյան ժողովածուների ՄՄ Մ 36 և Վիեննայի Մ 31-ի մեջ: Քարոզգրքի առակին մոտ է ՄՄ Մ 36 ձեռագրում պահպանվածը: Մյուս երկու բնագրերն ունեն շնչին տարբերակներ: Անհրաժեշտ է նշել, որ Քարոզգրքի և Վարդանյան ժողովածուների այս և մյուս բոլոր համապատասխան առակներն ու առակատիպ զրույցները XIV դարից ավելի վաղ ընդօրինակված հայերեն առակազրքերում չեն հանդիպում, և դրանց հնագույն աղբյուրը Բարդուղիմեոս Մարաղացու Քարոզգրքն է:

5. Մեկ այլ Վարդանյան ժողովածու ունի Քարոզգրքի 10 առակ՝ ՄՄ Մ 2184, 2260 հնագույն ընդօրինակություններում²⁰ (1. «Ընչեղ ալր և երկու որդիքն», 2. «Աւա», 3. «Թագաւոր և կուռքն», 4. «Երեք և ժողովուրդ», 5. «Վասն բարագրի», 6. «Փինիկա», 7. «Վասն ողնիոյ», 8. «Վասն հաւալսան», 9. «Վասն հուշկապարկայ», 10. «Վասն րոնոսոսի»): Այս ժողովածուն ընդօրին-

15 ՄՄ Մ 6929, ԺԴ դ., 193ա, Մ 2184, 1331 բ., 182բ.

16 ՄՄ Մ 2188, XV դ.: Տե՛ս նաև Н. М а р р, Сbornики..., ч. 2, с. 305, 284, 310, 216, 235, 237, Բեռլինի Մ 95, էջ 215բ—216, 205բ—207, Մ 90, էջ 177—178:

17 Н. М а р р, Сbornики..., ч. 2, с. 213.

18 Նույն տեղում, հ. 1, էջ 232:

19 Նույն տեղում, հ. 2, էջ 237, 260:

20 ՄՄ Մ 466 (208ա—212բ), Н. М а р р, Сbornики..., ч. 2, с. 260.

նակված է 1628 թ. Լիովում՝ Բարսեղ գրչի ձեռքով, Բաղկացած է երկու մասից: Առաջինը՝ «Գիրք առակաց ասացեալ սուրբ վարդապետին Վարդանայ», առակների հավաքածու է, ունի 128 միապար, 56-ը հայերեն «Բարուխոսից» են, մնացածը՝ Վարդանյան ժողովածուներից են առ այսօր մեղ անհայտ այլ աղբյուրներից: «Քարոզգրքի» նշված 10 առակներից յոթը ծագում են «Բարուխոսից», իսկ երեքը (առաջինի, երրորդի և չորրորդի) բնագրերը համընկնում են ՄՄ № 36 ձեռագրում՝ պահպանվածներին և ՄՄ № 466 ձեռագրում եղածների համեմատությամբ ունեն սակավ տարբերություններ:

6. Բարդուղիմեոսի «Քարոզգրքի» առակների մեկ այլ խումբ ավելի ուշ հանդիպում է Վարդանյան ՄՄ № 36 ձեռագրում: Ձեռագրի գրչության վայրը անհայտ է, գրիչը Սարգիս երեցն է, պատվիրատուն՝ Ստեփանոս վարդապետը: Սա մի ժողովածու է, որը սկսվում է «Վարդանայ Աղեկցւոյ առակք» նյութով: Առակները հիմնականում քաղված են «Աղուեսագրքից», բայց կան առակներ էլ, որոնց սկզբնաղբյուրը նույնպես հայտնի չի եղել Ն. Մանուկյան Սարգիս գրիչը իր հիշատակարանում նշում է, որ ժողովածուի առակները տարբեր աղբյուրներից են. «Երատք զեղեցկահարմարք է առակաւոր բանիւք, ասացեալ յիմաստնոցն պէսպէս և աղգի կերպարանօք, խօսելի ի դէպ ժամու ի հոգւորն և ի մարմնաւորն, ի շահ յօգտութիւն ուսումնասէր անձանց, զոր ի բազում այլ և այլ օրինակաց ժողովեալ եղաք տեսա՝: Այս առակներից մի քանիսը «Քարոզգրքում» չկան, և դրանց աղբյուրը առայժմ անհայտ է (№ 100, 101, 103, 106—117, 122, 125, 130)²², իսկ մյուսները գրեթե համընկնում են: Դրանք են՝ 1. «Հաւատի աշտարակ», 2. «Թագաւոր և կուռքն», 3. «Արագիւն և ճայէկն և յոպպան», 4. «Անսովոր բան պատճառ հիւսնդութեան», 5. «Ծիծաղ Ջրուստորի», 6. «Աւա» 7. «Ողորմած շուն», 8. «Սեր դստեր», 9. «Իմաստուն դատաւոր», 10. «Ընչեղ այր և երկու որդիքն», 11. «Վասն արախլեն», 12. «Իզմ երկից որդուց թագաւորի», 13. «Գող հայր ի տանջանս որդւոյն», 14. «Երկու նախանձախնդիր զինուորք թագաւորի», 15. «Կուրաքաշ շուն», 16. «Անհոգ պարտական», 17. «Պարգև Ազնջաւանդի», 18. «Հինգ տեսիլք», 19. «Երեք թագաւորի որդիք և պատուական ակն և դատաւոր», 20. «Ջուպ մնացորդաց ծայրատ սաղմոսաց», 21. «Են փայլիկ Յուլիանոսի», 22. «Այրի և դոգ տղայն», 23. «Երկու կանայք և կծիկ և դատաւոր», 24. «Տխուր թագաւոր», 25. «Տիգրիս և որսորդը հայնեաւ», 26. «Կոկորդիլոս և աւա», 27. «Սուրխամահի», 28. «Մանուկ թագաւոր և զաւրք», 29. «Ծառ ի հնդկաց», 30. «Երեք և ժողովուրդ», 31. «Կանայք կախարդք»²³:

Ն. Մանուկյան իր ուսումնասիրության մեջ նշել է, որ առակների մի մեծ խումբ (№ 90—133) օտար են Վարդանյան ժողովածուներին²⁴, եվ իրոք, առակների մի մեծ շարքի (վերջ նշված 31 առակները) առաջին անգամ հանդիպում ենք Բարդուղիմեոսի «Քարոզգրքում»²⁵, «Անհայտ» ծագումով ընդունված այս առակների բնագրերը լիովին համընկնում են «Քարոզգրքում» եղածների հետ: Այս կապակցությամբ Ն. Մանուկյանը ենթադրություն է անում. «Եվրոպական ազդեցությունը կարող էր ներգործել հայ դրականության վրա անմիջնորդաբար հենց բուն եվրոպայում... Հարանց վարք ժողովածու կա 1283 թ. ձեռագրում, ընդօրինակված Սալեռնոյում... Այդպիսի ժողովածուների մեջ կարող էին ներմուծվել բացառապես արեւմտյան աղբյուրներից սերող հոգվածներ: Ի դեպ, Վարդանյան ժողովածուների կազմողները հավանաբար չեն օգտվել անմիջապես եվրոպական աղբյուրներից, այլ դրանք վերցրել են հայերեն թարգմանություններից: Լատիներենից հաճույքով հայերեն էին թարգմանվում խրատական ժողովածուներ... Ստեփանոս վարդապետը (նկատի ունի Ստեփանոս Լեհացուն— Ն. Մ.) լատիներենից թարգմանել է «Հայելի վարուցը»: Ավելի վաղ լատիներենից թարգմանություններ կարող էին կատարվել լեհահայերի միջավայրում, որոնք աստիճանաբար կաթոլիկական ազդեցության էին ենթարկվում: № 26 առակը («Անկլիոյ թագաւորն և կոյս» — Ն. Մ.) ակնհայտորեն ցույց է տալիս, որ հայ-

²¹ ՄՄ № 36, 1699 թ., էջ 69ր:

²² Համարներն ըստ ՄՄ № 36 ձեռագրի: Տե՛ս նաև Н. Марр, Сборники..., ч. 1, с. 231, ч. 2, с. 270—300.

²³ Н. Марр, Сборники..., ч. 2, с. 270—300.

²⁴ Նույն տեղում, հ. 1, էջ 141:

²⁵ Պետք է ավելացնել, որ Վարդանյան ժողովածուները համեմատվել են «Քարոզգրքի» միայն հնագույն, XIV դ. ընդօրինակությունների հետ, որովհետև հետագայում, «Քարոզգրքում», կատարվել են նույն փոփոխությունները, որոնք նկատվում են Վարդանյան ժողովածուներում, այսինքն՝ նրանց մեջ ևս ներմուծվել են օտար տարրեր: Վարդանյան առակագրքերի և «Քարոզգրքի» առնչությունները հետազոտվել են նաև այլ ձեռագրերի տվյալների հիման վրա (տե՛ս ՄՄ № 3119, Վիեննայի № 29, 146, Բեռլինի № 90, 95, որոնց արդյունքները չենք բերում):

կական խրատական ժողովածուների մեջ... մուտք են գործել եվրոպական ծագում ունեցող պատմություններ²⁶։

Միայն որոշ վերապահությամբ կարող ենք համաձայնել այս կարծիքին։ Լատինական ազդեցության մասին խոսելով, Ն. Մառը նկատի չի ունեցել բուն Հայաստանի տարածքը, ուր ոչ թե XVII, այլ ավելի վաղ, XIII—XIV դդ. աստիճանաբար մուտք էր գործում կաթոլիկությունը։ Նկատվում էին լատինական ազդեցություններ լեզվի, գրականության և գիտությունների բնագավառներում։ Պետք է ասել, որ Ն. Մառի նշած Ն՝ 26 առակը՝ «Անկլիոյ թագաւորն և կոյս», գրանցված է նաև Վարդանյան ժողովածուների Բեռլինի № 90 ձեռագրում, ուր փոխանցվել է «Քարոզգրքի» հնագույն՝ 1331 թ. ընդօրինակությունից (ՄՄ № 2184, 216բ)։

Անհրաժեշտ է նշել նաև, որ Վարդանյան ՄՄ № 36-ի մի շարք առակներ կրում են նույն այն խորագրերը, որ ունեն Բարդուղիմեոսի «Քարոզգրքի» համապատասխան քարոզները՝ «Վասն բամբասանաց», «Վասն գթոյ», «Վասն անհոգութեան» և այլն։ Դա ևս հուշում է դրանց առնչության մասին։ Այդպես է սկսվում հերթական «Ողորմած շուն» առակը, որի «Վասն բողոքութեանց» ենթախորագիրը գալիս է Բարդուղիմեոսի նույնանուն քարոզից։ Այս առակը պատկանում է հոգեփրկիչ գրույցների խմբին։ Բարդուղիմեոսի համար այս կարգի առակների և գրույցների աղբյուր էին «Բարուախօսք», Եզովպոսի առակները, արեելյան հեթանոսները, որոնք նաև Վարդանյան ժողովածուների սկզբնաղբյուրներից էին։ Դրանում համոզվում ենք «Աղուեսագրքին» և Վարդանյան այլ ժողովածուներին ծանոթանալիս, բայց այս դեպքում ՄՄ № 36-ի բնագրերի համեմատությունը դարձյալ ցույց է տալիս, որ այս խմբի առակների հեղինակային պատկանելությունը ճշտումը ևս կապվում է Բարդուղիմեոսի «Քարոզգրքի» հետ։ «Ողորմած շուն» առակի երկու համեմատվող բնագրերը միայն աննշան տարբերությամբն են ունենում։

Մի շարք առակներ և առակատիպ գրույցներ ունեն արեելյան ծագում։ Դրանք են՝ 1. «Երեք որդի» և պատուական ալև և թագաւոր», 2. «Վարդապետ և սատանայ», 3. «Տեսիլ վասն դոխտոյ», 4. «Վանայք կախարդք», 5. «Գող հայր ի տանջանս որդւոյն» և այլն²⁷։ Այս կապակցությամբ հարց է ծագում՝ ի՞նչ ուղիներով են այդ առակները թափանցել Բարդուղիմեոսի «Քարոզգրքի» մեջ։ XIV դ. առաջ ընդօրինակված հայերեն ձեռագրերում դրանք չկան, Վարդանյան ժողովածուների մեջ հանդիպում են միայն XVII դարից սկսած, իսկ մեզ հայտնի են դարձել միայն Բարդուղիմեոսի «Քարոզգրքից»։ Օրինակ, այն առակները, որոնք կան «Քարոզգրքի» ՄՄ № 2184 ձեռագրում, 1331 թվականից առաջ ընդօրինակված ձեռագրերում չեն հանդիպում, իսկ Վարդանյան ՄՄ № 36 և նախորդ համեմատված ձեռագրերում հանդիպում են նույնությամբ կամ՝ միայն քիչ տարբերությամբով։

Հանրաժանով՝ «Տխուր թագաւոր» առակը, որը ծագել է «Պատմութիւն Յովսէփոսի և Բարաղամու» վիպակից²⁸, հանդիպում է «Քարոզգրքի» XIV դ. երկու ընդօրինակություններում (ՄՄ № 2184, 230ա, 2260, 218բ), բայց Վարդանյան ժողովածուներից՝ միայն ՄՄ № 30 ձեռագրում։ Առակն այնքան հանրաճանաչ էր, որ տեղ է գտել նաև «Հայելի վարուց» հայտնի ժողովածուի մեջ։ «Հայելի վարուցի» գրույցներից են նաև «Ուխտաւոր և էջ», «Երկու նախանձախնդիր զինուոր թագաւորի», «Փրկիսոփայ մահու դատապարտեալ և սիրելին», «Անկլիոյ թագաւոր և կոյս», «Ոսկեղբայր սիրտ», «Ուր սիրտ՝ անդ գանձ» գրույցները։ Ուրեմն՝ դրանք, որ լատինական «Հայելի վարուցի» վերջնական կազմավորումից մի քանի դար առաջ (էլ չենք ասում նրա լեհերեն, ռուսերեն և հայերեն թարգմանությունների մասին) արդեն կենցաղավարում էին Արևմուտքի մտավորականության շրջանակներում, դեռևս XIV դարի սկզբներին Բարդուղիմեոս Մարաղացու «Քարոզգրքի» միջոցով հայտնի էին դարձել նաև Հայաստանում։ Հետագայում դրանք ներմուծվել են Վարդանյան ժողովածուների մեջ, բնական է, ավելի վաղ, քան կատարվել էր «Հայելի վարուցի»՝ Ստեփանոս Լեհացու թարգմանությունը։ Սա խիստ արժեքավոր իրողություն է հայ-եվրոպական դրական առնչությունների պատմության համար։ Բնագրերի համեմատությունը հստակ ցույց է տալիս «Քարոզգրքի» և «Հայելի վարուցի» թվարկված առակների նույնությունը²⁹։

²⁶ Н. М а р р, Сборники..., ч. 1, с. 241.

²⁷ ՄՄ № 2184, 224բ, № 2260, 78ա, № 2184, 110ա, 284ա, № 2260, 182բ; Н. М а р р, Сборники..., ч. 1, с. 199, ч. 2, с. 286, 310, 305, 293, 216:

²⁸ Н. М а р р, Армянно-грузинские материалы, СПб., 1894, с. 74—76; հոսիսի՝ Сборники..., ч. 2, с. 288; ՄՄ № 36 (1ա—67բ)։

²⁹ Բարդուղիմեոս Մարաղացու «Քարոզգրքում» կան նաև ուրիշ առակներ, որոնք հետա-

«Քարոզգրքի» մի խումբ առակներ, Վարդանյան ժողովածուներից բացի, ուղղակի կապվում են նաև «Բարուխոսի» հետ «Բարուխոս» կոչված առակների հայտնի ժողովածուն կազմվել է II—III դդ.։ Բնագրից՝ հունարենից, թարգմանվել է տարբեր լեզուների, իսկ V—VII դարերում՝ հայերեն ժողովածուն պարունակում է բուսական և կենդանական աշխարհի ու հանքաքարերի մասին առակներ, որոնք վաղ ժամանակներից մտել են հայ մատենագրության մեջ։ Դրանք հանդիպում են Ագաթանգեղոսի, Եղնիկ Կոզբացու, Դավիթ Անհաղթի, Հովհաննես Երզնկացու, Վարդան Այգեկցու և այլ հայ հեղինակների երկերում։ Ն. Մառր ենթադրում է, որ «Բարուխոսի» առակները կարող էին Վարդանյան ժողովածուների հին խմբագրությունների, այսինքն՝ «Աղուեսագրքի» մեջ մտնել նախ և առաջ Սուրբ գրքի և «Հարանց վարքի» միջոցով, իսկ ուշ ընդօրինակված ձևագրերի մեջ՝ ուղղակիորեն «Բարուխոսի» հետագա խմբագրություններից։ Բայց մեր բնագրական համեմատությունները հանգեցրին այլ արդյունքի։ Անհրաժեշտ եղավ համեմատել ոչ միայն «Քարոզգրքի» և Վարդանի առակները, այլև «Բարուխոսի» բնագիրը՝ տարբեր ձևագրերում։

«Բարուխոսը» լատիներեն թարգմանվել է III դարում։ Բարդուղիմեոսը «Բարուխոսից» բազմաթիվ առակներ է օգտագործել իր «Քարոզգրքում»։ Դրանցից 20-ը «Քարոզգրքից» փոխանցվել են Վարդանյան ժողովածուների մեջ։ Դրանք են՝ 1. «Վասն կղրոյ», 2. «Սաֆիրա ակն», 3. «Վասն արախեն», 4. «Կոկորդիլոս և դրոս», 5. «Վասն Յովադի», 6. «Յողդ», 7. «Վասն քարադրի», 8. «Փերեդիկչոն», 9. «Վասն բոնոսոսի», 10. «Վասն աւծի», 11. «Սուրխամահի», 12. «Տիգրիս և որսորդը», 13. «Վասն զֆիլոյ», 14. «Կապիկը և որսորդը» 15. «Սիրամամահի», 16. «Փերեկս», 17. «Վասն հուշկապարկայ», 18. «Վասն ողնիոյ», 19. «Վասն հաւալան», 20. «Վասն ժրահաւու»³⁰։ Արանցից հինգը՝ 9, 16, 17, 18, 19, որոնք օգտագործել է Բարդուղիմեոսը, կան նաև «Բարուխոսի» մեջ, բայց «Աղուեսագրքի» և Վարդանյան ուշ ժողովածուների համեմատ ունեն խմբագրական որոշ տարբերություններ³¹։ Բնագրային մանրակրկիտ համեմատությունները ցույց տվեցին, որ «Վասն քարադրի» առակը (ՄՄ № 466), «Վասն արախեն», «Կոկորդիլոս» և դրոս», «Փերեդիկչոն», «Վասն աւծի», «Սուրխամահի» (ՄՄ № 36) և այլ առակներ բացարձակ համընկնում են «Քարոզգրքի» և «Բարուխոսի» բնագրերի հետ։ Բարդուղիմեոսի երկու առակները՝ «Սիրամարդը» և «Սաֆիրա ակն», Վարդանյան ՄՄ № 2189-ի բնագրերի հետ ունեն խմբագրական տարբերություններ, իսկ հայերեն «Բարուխոսում» դրանք չկան, ուրեմն ՄՄ № 2189 ձեռագրի մեջ ներթափանցել են Բարդուղիմեոսի «Քարոզգրքի» միջոցով՝ թարգմանված ուղղակի լատիներենից³²։

«Բարուխոսի» թեմաներով «Քարոզգրքի» բոլոր առակները, որոնք Ն. Մառր հրատարակել է Բեռլինի № 90 ձեռագրից, համընկնում են իրար և «Բարուխոսի» առակների հետ, բացի «Տիգրիս և որսորդը», «Կապիկը և որսորդը» ու «Վասն զֆիլոյ» առակներից, որոնք նույնպես չկան հայերեն «Բարուխոսում» և, ըստ երևույթի, առաջին անգամ հայերեն են թարգմանվել լատիներենից, XIV դարում, Բարդուղիմեոսի կողմից և հետագայում ներմուծվել Վարդանյան ժողովածուների մեջ³³։ «Վասն քարադրի» առակը հանդիպում է «Քարոզգրքի» հնագույն ձեռագրերից մեկում, Վարդանյան ժողովածուներում և «Բարուխոսի» բոլոր խմբագրություններում³⁴։ Հայերեն «Բարուխոսի» այս առակի երկու տարբերակները բնագրական շատ մերձավոր կապ ունեն Բարդուղիմեոսի «Քարոզգրքի» տարբերակների հետ, միայն թուշունի անունը Բարդուղիմեոսի մոտ Կալադրիոն է, իսկ «Բարուխոսում»՝ Քարադրիոն։ Քանի որ «Բարուխոսի» այս առակը հանդիպում է Վարդանյան ժողովածուների ամենավաղ և հիմնական խմբագրությունների մեջ,

զայում գրանցվել են «Հայելի վարուցի» մեջ, բայց քանի որ Վարդանի ժողովածուների հետ չեն առնչվում, դրանց չենք անդրադառնում։ Կարծում ենք, որ Ստեփանոս Լեհացիի «Հայելի վարուց» ժողովածուն թարգմանելիս ձեռքի տակ է ունեցել Բարդուղիմեոս Մարաղացու «Քարոզգրքը»։

³⁰ H. M a r r. Сборники..., ч. 1, с. 394—400.

³¹ «Բարուխոսի» առակները տե՛ս ՄՄ № 466 (192բ—208ա), № 4231, Ժն դ., (59բ—70բ), № 40, ԺԴ դ. (246բ—250բ) և H. M a r r, Сборники..., ч. 3, с. 131—175.

³² Տե՛ս H. M a r r, Сборники..., ч. 2, 330, 332; ՄՄ № 2184, 1331, 170ա, 271բ։

³³ Տե՛ս H. M a r r, Сборники..., ч. 1, с. 237—239, 402—403, Բեռլինի № 90, էջ 77—78, 158—159, 162—163, ՄՄ № 2184, 221ա, № 2200, 112ա, 139ա։

³⁴ Տե՛ս ՄՄ № 2184, 176բ, ՄՄ № 466, 198բ—208ա, ՄՄ № 36, 1ա—67բ, H. M a r r, Сборники..., ч. 2, с. 141.

ապա XIII դ. (Համենայն դեպս՝ մինչև 1331 թ., այսինքն՝ Քարոզգրքի թարգմանության ժամանակը) այն արդեն մտել էր «Աղուեսագրքի» (նաև նրա արաբական թարգմանության) մեջ: Համեմատությունը ցույց տվեց, որ Բարդուղիմեոսի առակը մոտ է «Բարուխասի» առակին և տարբերվում է «Աղուեսագրքի» օրինակից, բայց հետագայում կրկին մուտք է դարձել Վարդանյան ժողովածուների մեջ, այս անգամ արդեն՝ Քարոզգրքի միջոցով և նոր խմբագրությամբ: Այս առակների բնագրերը մի փոքր տարբերություն ունեն միայն իրենց բարոյախոսական եզրափակման մեջ:

«Վասն արախյն» առակը, որը գրանցված է Քարոզգրքի հնագույն ձեռագրերից մեկում, վարդանյան ժողովածուներում պահպանվել է 2 խմբագրություններում, ինչպես նաև՝ «Աղուեսագրքում»: Առակը տեղ է գտել «Բարուխասի» բոլոր խմբագրություններում, բացի դրանից այն օգտագործված է նաև Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայում» և Հովհաննես Կրդեկացու «Թրատուհասարակացի» մեջ: Նշված բոլոր բնագրերի համեմատությունը հանգեցնում է հետևյալին. Բարդուղիմեոսի առակը համընկնում է «Բարուխասի» ՄՄ № 466 ձեռագրի և Վարդանյան՝ ՄՄ № 36 ժողովածուի առակների հետ: Վարդան Աղեկցուն, «Աղուեսագրքին» Բարդուղիմեոս Մարաղացին ծանոթ չի եղել: Առակը թարգմանելիս նա օգտվել է հայերեն «Բարուխասի»-ից, Հետագայում (արդեն հայերեն) Քարոզգրքից առակը փոխանցվել է Վարդանյան ժողովածուների մեջ ՄՄ № 36 ձեռագրի միջոցով և նոր խմբագրությամբ:

Բարդուղիմեոսի Քարոզգրքում կան երկու այլ առակ ևս, որոնք, դարձյալ, վերոհիշյալ երկուսի նման հանդիպում են տարբեր հեղինակների մոտ: Մեկը՝ «Փերեդիկոն» է («Մառ ի հեղեկա»): Այն գրանցված է և՛ «Աղուեսագրքում» (հայ և արաբ.), և՛ «Բարուխասում» (4 խմբագրություններում), և՛ Վարդանյան ՄՄ № 36 ձեռագրում³⁵: Այս առակը հնում «Բարուխասի»-ից մուտք է գործել «Աղուեսագրքի» մեջ: Անկախ դրանից, Բարդուղիմեոսն իր Քարոզգրքը թարգմանելիս այն վերցրել է «Բարուխասի» հայերեն թարգմանությունից, իսկ հետագայում Քարոզգրքից կրկին ներմուծվել է Վարդանյան ժողովածուների № 36 ձեռագրի մեջ՝ Քարոզգրքում: Եղած ձևով: Մյուսը՝ Վասն ժառհալում առակն է, որը հանդիպում է Քարոզգրքի 15 ձեռագիր-ընդօրինակություններում: «Բարուխասի» այս առակը օգտագործվել է Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայում»: Հնում թարգմանվել է հայերեն և պահպանվել «Բարուխասի» 6 խմբագրություններում: Այն առկա է Վիեննայի և Բեռլինի Վարդանյան ժողովածուներում³⁷: Այս դեպքում էլ է Բարդուղիմեոսը օգտվել հայերեն «Բարուխասի»-ից (Թեկուզ Բարսեղ Կեսարացու բնագիրը ևս մոտ է Բարդուղիմեոսի օրինակին): Հիշյալ առակների միայն մեկնություններն են տարբեր: Վարդանյան ուշ շրջանի ժողովածուների մեջ, անկասկած, անցել են Քարոզգրքի միջոցով:

«Կեկորդիլոս և դրոս», «Վասն ամի», «Մուրխամահի» և մնացած առակները դարձյալ անցել են երկու հիմնական օղակներից՝ հայերեն «Բարուխասի»՝ Քարոզգրքին, այստեղից էլ՝ Վարդանյան ուշ ժողովածուներին³⁸:

Այսպիսով՝ ամփոփելով մեր հետազոտությունը, գալիս ենք հետևյալ եզրակացություններին.

1. Ուշ միջնադարում Վարդանյան ժողովածուներ ներմուծված առակների մի մեծ խումբ (90 միավոր), որոնց աղբյուրն անհայտ էր ն. Մառին, քաղված են Բարդուղիմեոս Մարաղացու Քարոզգրքից և վերջինիս վաղ (XIV դ.) օրինակներից բացի առկա են Վարդանյան ուշ առակագրքերում:

2. Նշված 90 առակներից և առակատիպ զրույցներից 20-ը բխում են «Բարուխասի»-ից:

35 Տե՛ս ՄՄ № 2184, 212բ, «Աղուեսագիրք», № 79 (1668, Ամստերդամ), ՄՄ № 36, 1ա—67բ, ՄՄ № 466, № 10, 198բ—208ա, նաև՝ Н. Марр, Сборники..., ч. 1, с. 402—403, ч. 2, с. 229, ч. 3, с. 149; Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցաօրեայ արարչութեան, աշխատասիրությամբ Կ. Մուրադյանի, Երևան, 1984, էջ 269, Հովհաննես Երզնկացի, Էրատ հասարակաց, ՄՄ № 1475, 1539, 113բ—137բ:

36 Տե՛ս «Աղուեսագիրք», № 114, ՄՄ 36, 1ա—67 բ, Н. Марр, Сборники..., ч. 1, с. 402—403, ч. 2, с. 46, ч. 3, с. 152, ՄՄ № 2184, 133ա:

37 Տե՛ս ՄՄ № 2184, 252բ, Բարսեղ Կեսարացի, էջ 270, ՄՄ № 2184, 252բ, Բեռլինի № 90, էջ 155—156, Н. Марр, Сборники..., ч. 1, с. 236, 402, ч. 3, с. 166.

38 Տե՛ս ՄՄ № 2184, 97բ, 140ա, ՄՄ № 2260, 236ա, ՄՄ № 36, 1ա—67բ, Н. Марр, Сборники..., ч. 1, с. 402, 221.

3. Բարդուղիմեոսը իր «Քարոզգրքի» արևելյան ծագում ունեցող առակներին ծանոթ է եղել օտար (ոչ հայ) գրականությունից:

4. Մի այլ խումբ առակների, որոնք հանդիպում են «Քարոզգրքի» միայն ու շրջանի ընդօրինակությունների մեջ և համընկնում են Վարդանյան ժողովածուների առակներին, աղբյուրը դեռևս մեզ ստուգապես հայտնի չէ:

5. «Հայելի վարուցի» մեջ գտնվող առակները, որոնք կան Բարդուղիմեոսի «Քարոզգրքի» XIV դ. ձեռագրերում և հետագայում թափանցել են Վարդանյան ժողովածուներ, այն առակներն են, որոնք կենցաղավարել են նվրոպայում դեռևս XIV դ., այսինքն՝ լատինական «Հայելի վարուց» ժողովածուի ստեղծումից մոտ երկու դար առաջ, և, մեր կարծիքով, առաջին անգամ մուտք են գործել հայ մատենագրության մեջ Բարդուղիմեոս Մարաղացու միջոցով:

6. «Բարուխիսի», «Քարոզգրքի» և Վարդանյան ժողովածուների մեջ 20 առակների աղբյուրությունների քննությունից պարզվում է, որ այդ առակները վերջիններիս մեջ մուտք են գործել «Բարուխիսից» ոչ անմիջաբար, այլ «Քարոզգրքի» միջոցով: Լսա երևույթին, «Քարոզգրքը» հայերեն թարգմանելիս Բարդուղիմեոսը կամ, թերևս, Հակոբ Քոնեցին, կրկնակի աշխատանք չկատարելու համար, ուղղակի օգտվել են «Բարուխիսի» հայերեն թարգմանությունից, ըստ այդմ էլ բացատրելի են դրանց որոշ բովանդակային և բնագրական տարբերությունները համապատասխան երկերում, իսկ այն առակները, որոնք չկան հայերեն «Բարուխիսում», հայերեն են թարգմանվել անմիջապես լատիններից Բարդուղիմեոսի կողմից և «Հայելի վարուցի» հիշյալ առակների հետ առաջին անգամ մուտք են գործել հայ մատենագրության մեջ նրա միջոցով:

СВЯЗЬ «КНИГИ ПРОПОВЕДЕЙ» ВАРФОЛОМЕЯ БОЛОНСКОГО СО СРЕДНЕВЕКОВЫМИ АРМЯНСКИМИ СБОРНИКАМИ ПРИТЧ

НОНА МАНУКЯН

Резюме

«Книга проповедей» Варфоломея Болонского (XIV в.), именуемого в Армении Марагаци, является источником 90 притч в поздних редакциях «Сборников притч Вардана». Их авторская принадлежность до сих пор была неизвестна. Двадцать из этих притч взяты из «Физиолога», а притчи, не имеющие здесь параллелей, были переведены им с латинского и впервые вошли в армянскую книжность в XIV в. Кроме того, несколько сюжетов, вошедших впоследствии в латинский сборник «Великое зеркало» (кон. XV в.), уже в начале XIV в. проникло в средневековую армянскую литературу через «Книгу проповедей» Варфоломея Болонского.